«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՀԽՍՀ տարածքային հիմնախնդիրները» թեմայի ուսուցման առանձնահատկությունը միջին դպրոցում

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց պատմություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Սասուն Ավետիսյան

ՄԱՐԶ՝ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Ծիածանի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Հետազոտական աշխատանք կատարելու նպատակներ

Խնդիրներ

Մեթոդաբանություն

Ուսումնասիրման նյութ

Եզրակացություններ և առաջարկություններ

Օգտագործված գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՀԽՍՀ տարածքային հիմնախնդիրները» թեմայի ուսուցումը և ուսումնասիրությունը սովորողի համար կարևոր է, քանի որ շուրջ հարյուր տարի անց տարածաշրջանում տարածքային հիմնախնդիրները արդարացի հանգուցալուծումներ չեն ստացել և հետխորհրդային որևէ երկրի սահմաններ հստակեցված չեն։ Թեման մեզ համար կարևոր և արդիական է, որովհետև տարածքային հիմնախնդիրները տարածաշրջանում հանգեցնում են մշտական անկայունության և պատերազմի սպառնալիքի։ Դրա վառ ապացույցն է Արցախյան առաջին պատերազմը 1991-1994թթ. , 2016թ. Ապրիլյան քառօրյան և վերջերս 2020թ. Արցախյան երկրորդ պատերազմը, որ իր ծավալով, մասշտաբով, օգտագործված զինտեխնիկայով, մարդկային, նյութական և տարածքային կորուստներով անհամեմատելի էր նախորդ պատերազմների հետ։

Միջին դպրոցի սովորողը թեմայի ուսուցման ընթացքում խորքային կուսումնասիրի և պատկերացում կկազմի տարածաշրջանում դեռևս խորհրդային շրջանից վիճելի համարվող տարածքային հիմնախնդիրներին՝ Ջավախք, Կարս, Սուրմալու, Նախիջևան, Զանգեզուր, Արցախ։ Թե ինչպես է Խորհրդային Ռուսաստանը վերը թվարկված տարածքային խնդիրները լուծել ի շահ իրեն և Թուրքիայի՝ կնքելով 1921թ մարտի 16 Մոսկվայի և նույն թվականի հոկտեմբերի 13 Կարսի պայմանգրերի։ Պատկերացում կկազմի ըստ այդ պայմանագրերի հայկական տարածքների ապօրինի բռնազավթման մասին՝ Ջավախքը տրվեց Խորհրդային Վրաստանին, Կարսը և Սուրմալուն (որը երբևէ չի եղել Թուրքիայի կազմում) հանձնվեց Թուրքիային, Նախիջևանը իբրև ինքնավար տարածք հանձնվեց Խորհրդային Ադրբեջանին, Զանգեզուրը՝ Սյունիքի Սպարապետ, Խուստուփյան արծիվ Գարեգին Նժդեհի ազգանվեր ջանքերի շնորհիվ մնաց Խորհրդային Հայաստանին, Արցախը 1921թ հուլիսի 4-ին որոշվեց թողնել ՀԽՍՀ-ին, սակայն հաջորդ օր որոշվում է Արցախը ևս նվիրաբերել Խորհրդային

Ադրբեջանին, որոշման դեմ հայերի համառ պայքարի շնորհիվ 1923թ հուլիսի 7-ին Արցախը հռչակվեց ինքնավար մարզ։

Թեմայի խորքային իմացությունը ավագ դպրոցի սովորողին հնարավորություն կտա հարստացնել գիտելքիները թեմայի վերաբերյալ, հստակ կիմանա խնդրի առաջացման պատմությունը, կմատնանշի թույլ տված սխալները (ապիկար կառավարիչների վարած քաղաքականությունը), մեր թույլ կողմերը, կհարստացնի սովորողի վելուծական կարողությունները, կզարգացնի առողջ քննադատական մտածողությունը և լուծումներ գտնելու հմտությունները։

Հետազոտական աշխատանք կատարելու նպատակները.

- Զարգացնել սովորողի «ՀԽՍՀ տարածքային հիմնախնդիրները» թեմայի ուսումնասիրությունը կատարելու հմտությունները:
- Խթանել սովորողի նշված թեմայով հետազոտություն կատարելու հմտության կատարելագործումը:
- Սահմանել ռազմավարություն, որը կնպաստի թեմայի համակողմանի ուսումնասիրությանը:
- Առկա գիտելիքների հիման վրա կատարելագործել սովորողի վերլուծական և քննադատական մտածողությունը, լուծումեր գտնելու և առաջարկելու կարողությունները:
- Թեման ուսունասիրելուց և վերլուծելուց հետո սովորողի հետագա անելիքները նախանշելու և զարգացման ուղղիները կանխատեսելու կարողությունների կատարելագործում:

Խնդիրներ.

- Սկզբնաղբյուրներից օգտվելով ուսումնասիրել՝ Անդրկովկասի երկրների խորհրդայնացումից հետո տարածաշրջանում առաջացած տարածքային հիմնախնդիրները։
- Բացահայտել տարածաշրջանում առաջացած հիմնախնդիրների սկզբնապատճառը և դրանց պատճառահետևանքային կապը։
- Ներկայացնել կատարած ուսումնասիրությունները և բացահայտումները։
- Վերլուծել հիմնախնդրի առաջացման պատճառները, վեր հանել դրա արդիականությունը Հայաստանի համար և կազակերպել քննարկում։
- Գնահատել Մոսկվայի և Կարսի պայմանագրով տարածքային բաժանումների օրինականությունը և հիմնախնդրի իբրև լուծման արդարացիությունը։
- Առաջարկել լուծումներ ապօրինի բռնազավթված տարածքների հիմնախնդրի իրավական կարգավորման համար։

Մեթոդաբանություն

Մեթոդներ՝

- Զրույց
- Խմբային աշխատանք
- Հետազոտություն
- Վենի դիագրամ
- Ցուցադրական (քարտեզներ)
- Գաղափարների քարտեզագրում

Վերը թվարկված մեթոդների կիրառության շնորհիվ միջին դպրոցի սովորողը ձեռք կբերի շատ օգտակար գիտելիքներ։ Խմբային աշխատանքի օգնությամբ կիրականացնի հետազոտություններ, որը հնարավորություն կտա բացահայտելու հիմնախնդրի առաջացման պատճառները։ Ցուցադրական մեթոդի կիրառմամբ սովորողը կհամեմատի Հայաստանի առաջին Հանրապետության, Սևրի պայմանագրով Հայաստանին հատկացվող տարածքների և ՀԽՍՀ քարտեզները։ Վենի դիագրամի միջոցով կհամեմատի Մոսկվայի և Կարսի պայմանագրերը։ Համեմատություններից և վերլուծությունից հետո սովորողի առաջարկած լուծումները կհամակարգվեն գաղափարների քարտեզագրում մեթոդի օգնությամբ։

«ՀԽՍՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ»

1921 Թ. ՄՈՍԿՎԱՅԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ:

ՄԱՐՏԻ 16-Ի ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1920 թ. Նոյեմբերի 27-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարը համաձայնություն տվեց Մուստաֆա Քեմալի առաջարկությանը՝ Մոսկվայում ռուս-թուրքական խորհրդաժողով հրավիրելու մասին: Ինչպես արդեն հայտնի է, 1920 թ. ամռանը Մոսկվայում տեղի ունեցած ռուս-թուրքական բանակցությունների արդյունքում մշակվեց ռուս-թուրքական պայմանագրի օգոստոսի 24-ի նախագիծը, որը այդպես էլ պայմանագրի չվերածվեց: Մերժելով այդ նախագիծը՝ Քեմալը հասկացնում էր Մոսկվային, որ ինքն ավելին է սպասում, որտեղ կենտրոնականը Ալեքսանդրապոլի պայմանագրի ճանաչումն էր Խորհրդային Ռուսաստանի կողմից:

1920 թ. Դեկտեմբերի 8-ին Թուրքիայի կառավարությունը հայտնեց Մոսկվա ուղարկվող պատվիրակության կազմը՝ Յուսուֆ Քեմալ, Ռիզա Նուրի, Մոսկվայում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադ:

Դեկտեմբերի 9-ին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը նոտայով ողջունեց Թուրքիայի կառավարության առաջարկը՝ Մոսկվայում ռուս-թուրքական խորհրդաժողով անցկացնելու մասին: Նոտայում միաժամանակ նշվում էր, որ անհրաժեշտ է հայկական և ադրբեջանական ներկայացուցիչների մասնակցությունը, քանի որ այդ պերությունների հետ առկա են տարածքային և այլ հարցեր:

Սակայն Թուրքիայի կառավարությունը ոչ միայն վճռականապես դեմ դուրս եկավ Խորհրդաժողովին Հայաստանի ներկայացուցիչների մասնակցությանը, այլև պահանջեց, որ Ռուսաստանի արտգործժողկոմատի

կոլեգիայի անդամ, հայազգի Լևոն Կարախանյանը չմասնակցի խորհրդաժողովի աշխատանքներին:

Դեկտեմբերի 15-ին Ռուսաստանի կառավարությանը ներկայացված թուրքական կառավարության նոտայում ուղղակի հարց էր տրվում, թե ինչպիսի՞ն է լինելու Մոսկվայի դիրքը հայկական հարցում: Նոտայում ընդգծվում էր, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչ թե բռնի հաշտություն է, այլ հիմնված է ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վրա, և իրենք անեքսիայի են ենթարկել սոսկ թուրքական բնակչություն ունեցող տարածքները, բնակչության, որի նկատմամբ դաշնակները թույլ են տվել Մոսկվայում արդեն հայտնի գազանությունները: Նոտայում անհանգստություն էր հայտնվում, որ Մոսկվան ցանկանում է վերանայել հիշյալ պայմանագիրը և Հայաստանին վերադարձնել թուրքական բնակչությամբ տարածքները:

Ռուս-թուրքական կոնֆերանսի նախապատրաստման շրջանում ևս Խորհրդային Ռուսաստանին քաջ հայտնի էր քեմալական Թուրքիայի հակախորհրդային և հակառուսական դիրքորոշումը: Այդ դիրքորոշմանը քաջատեղյանկ էր նաև Վ. Լենինը, որը Խորհուրդների 8-րդ համագումարում կուսակցական ֆրակցիայի դեկտեմբերի 21-ի փակ նիստում ասել է. «Հայաստանի վրա թուրքական հարձակումը մեր դեմ է ուղղված, Անտանտը մեզ համար փոս էր փորում, և ինքն էլ ընկավ այնտեղ, որովհետև մենք ձեռք բերեցինք Խորհրդային Հայաստան: Թուրքիան ղեկավարում էին կադետներ, օկտյաբրիստներ, նացիոնալիստներ, որոնք պատրաստ են մեզ ծախել Անտանտին»: Թուրքերի քաղաքական այդ նենգ կերպարանքը հայտնի էր խորհրդային ղեկավարներին, Խորհրդային Ռուսաստանը չէր կարող պատերազմի մեջ մտնել Թուրքիայի հետ, որովհետև մտավախություն ուներ, որ պատերազմում քեմալականներին կմիանային Անտանտի տերությունները և առաջին հերթին Անգլիան: Այս իրական վտանգից խուսափելու համար Խորհրդային Ռուսաստանը դիմում էր զիջումների՝ ի վնաս Հայաստանի և բուն Ռուսաստանի շահի: Իսկ Մուստաֆա

Քեմալն աշխատում էր ձեռքից բաց չթողնել ի շահ Թուրքիայի ստեղծված այդ բացառիկ հնարավորությունը:[1]

Ընդունելով Ռուսաստանի կառավարության 1920 թ. Դեկտեմբերի 31-ի առաջարկը՝ Մոսկվայում կայանալիք ռուս-թուրքական բանակցություններին մասնակցելու համար, Հայաստանի կառավարությունը Մոսկվա ուղարկեց պատվիրակություն հետևյալ կազմով՝ Ա. Բեկզադյան (պատվիրակության ղեկավար), Ա. Կարինյան (Մոսկվայում Հայաստանի կառավարության մշտական ներկայացուցիչ), Ս. Տեր-Գաբրիելյան: Սակայն Հայաստանի պատվիրակներին թույլ չտվեցին մասնակցել բանակցություններին:

1921թ. փետրվարին Մոսկվայում ռուս-թուրքական խորհրդաժողով հրավիրելու մասին լուրը ստիպեց դաշնակիցներին հրավիրել իրենց խորհրդաժողովը, որը նախատեսվեց Լոնդոնում՝ փետրվարի 21-ին, որին մասնակցելու էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հունաստամի, Բելգիայի, Գերմանիայի, Թուրքիայի ներակայացուցիչները և հայ պատվիրակները: Թուրքական պատվիրակությունը ղեկավարում էր Բեքիր Սամի բեյը:

Լոնդոնի խորհրդաժողովի փետրվարի 26-ի նիստում ելույթ ունեցավ Բեքիր Սամի բեյը, ով նիստի մասնակիցներին կոչ արեց ճանաչել Ազգային մեծ ժողովի ուխտը և չեղյալ համարել Սևրի պայմանագիրը, հայ-թուրքական սահմանները ճանաչել ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի:

1921 թ. փետրվարի կեսերին Հայաստանում սկսվեց հակախորհրդային ապստամբություն: Ս. Վրացյանի գլխավորած Հայրենիքի փրկության կոմիտեն հայտարարեց իշխանությունն իր ձեռքը վերցնելու և Ալեքսանդրապոլի պայմանագիրը ճանաչելու մասին: Փետրվարի խռովությունը չէր կարող իր

[1] Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ. Երևան, 1999, էջ 413

բացասական կնիքը չդնել Լոնդոնի և Մոսկավյի բանակցությունների վրա, երբ շոշափվում էր Հայաստանի հարցը:

Թուրքական պատվիրակությունը Մոսկվա ժամանեց 1921 թ. փետրվարի 18-ին, իսկ ռուս-թուրքական պաշտոնական բանակցություններն սկսվեցին փետրվարի 26-ին: Մուստաֆա Քեմալը ցուցում էր տվել թուրքական պատվիրակությանը՝ ամեն կերպ խուսափել հայ-թուրքական տարածքային հարցերը քննարկելուց և ձգտել միայն ռազմաքաղաքական դաշինք կնքել Ռուսաստանի հետ՝ համարելով, որ տարածքային հարցերն արդեն լուծված են Ալեքսանդրապոլի պայմանագրով:

Խորհրդաժողովի առաջին լիակազմ նիստը բացեց Գ. Չիչերինը՝ հայտարարելով, որ այն նոր դարագլուխ է բացում Արևելքի ժողովուրդների պատմության մեջ, պարսավեց Սևրի պայմանագիրը, գովաբանեց Ռուսաստանի՝ «բարեկամ և դաշնակից» հեղափոխական Թուրքիային, որի ժողովուրդը պետք է լինեի իր տան տերը:

Պատասխան խոսքերով հանդես եկավ Յուսուֆ Քեմալ բեյը, որը հավատացրեց, որ աշխարհագրական, պատմական, տնտեսական ու քաղաքական պայմանները Թուրքիային ուղի են ցույց տվել դեպի Ռուսաստան:

Հետագա նիստը շարունակվեցին քաղաքական, իրավաբանական և խմբագրական հանձնաժողովներում:

Սահմանային հարցերի լուծմանը խորհրդաժողովն անրադարցավ մարտի 10-ի լիակազմ նիստում, որը նախագահում էր Յուսուֆ Քեմալ բեյը: Ելույթ ունեցավ առաջինը՝ Չիչերինը հայտարարեց, որ Ռուսաստանը ճանաչում է Թուրքիայի Ազգային ժողովի ընդունած ուխտը, սակայն ընդգծեց, որ այն որոշակի ուղղումների պետք է ենթարկվի: Նա անառարկելիորեն ընդգծեց Բաթումի՝ որպես սևծովյան նավահանգիստի, բացառիկ կենասկան անհրաժեշտությունը ողջ խորհրդային երկրների համար:

Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 14-ին Չիչերչնը, պատասխանելով Լենինի հարցումներին՝ նշել էր, որ Կարսը Բաթումի բանալին է, ուստի խիստ կարևոր է այն Հայաստանին թողնել: Մինչդեռ Թուրքիան ամեն գնով ձգտում էր տեր դառնալ Կարսին: Իսկ այն պայմաններում, երբ Հայաստանում իշխանության տեր դարձած Հայրենիքի փրկության կոմիտեն թուրքերին առաջարկել էր հայ-թուրքական հարաբերությունների հիմքում դնել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, Ռուսաստանը վարանում էր քննարկման դնել Կարսը Հայաստանին հանձնելու հարցը՝ մտավախություն ունենալով, որ դա կարող է ամրապնդել դաշնակցականների դիրքերը: Այդ էր պատճառը, որ Ռուսաստանը հրաժարվեց Կարսը Հայաստանին վերադարձնելու պահանջից:

Հայաստանի սահմանների վերաբերյալ Չիչերինը հայտարարեց, որ Հայաստանին մնում են Աղբաբայի և Ղզըլ-Դաղի լեռները, ինչպես նաև Ալեքսանդրապոլի հաշտությամբ Հայաստանին թողնված տարածքներ: Չիչերինը խոստացել էր թուրքերին, որ ռուսական կառավարությունը չի պնդի, որպիսդի Հայաստանի սահմաններն անցնեն Արփաչայից արևելք և Արաքսից հարավ:

Ալեքսանդրապոլ-Նախիջևան եիկաթգծի պաշտպանությունն ապահովելու նպատակով ռուսական կողմը «խնդրում էր» Թուրքիային՝ հայ-թուրքական սահմանի երկայնքով 8 կիլոմետրանոց լայնության շերտով զորքեր չպահել և ամրություններ չկառուցել: Յուսուֆ Քեմալը դրան համաձայնեց՝ համարելով դա մեծ զիջում, քանի որ այդ շերտը ձգվում էր 80-100 կմ երկարությամբ:

Թուրքիայի համար հատուկ հետաքրքրություն էր ներկայացնում Նախիջևանի հարցը: Նրանք առաջարկեցին քննարկել Նախիջևանի ինքնավարության հարցը՝ Ադրբեջանի հովանավորության տակ:

Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքականության փաստաթղթերում միանշանակ ընդունվում էր, որ Նախիջևանը Հայաստանի

անբաժանելի մասն է: Սակայն վիճակը բարդանում էր նրանով, որ Ալեքսանդրապոլի պայմանագրով այն զիջվել էր Թուրքիային, իսկ Հայրենիքի փրկության կոմիտեն այդ չարաբաստիկ պայմանագիրը համարել էր հայ-թուրքական հարաբերությունների հիմք: Նման պայմաններում խորհրդային կողմը կարևորում էր, որ բոլոր դեպքերում Նախիջևանը գոնե չանցներ Թուրքիային:

Կոնֆերանսում քննարկվեց նաև Ախալքալաքի և Ախալցխայի հարցը: Խորհրդային կառավարության պահանջով Վրաստան խորհրդայնացումից հետո (1921 թվ. փետրվարի 25) թուրքական զորքերը դուրս բերվեցին այդ տարածքներից:

1921 թ. Մարտի 16-ին՝ ժամը 22-ին ստորագրվեց «Պայամանագիր Ռուսաստանի և Թուրքիայի միջև», որը ՌԽՖՍՀ կողմից ստորագրել էին Արտաքին գործերի կոմիսար Գեորգի Չիչերինը և ՀԿԳԿ անդամ Ջելալ-Էդդին Կորկմասովը, Թուրքիայի կողմից՝ ժողտնտեսության կոմիսար, Ազգային ժողովի պատգամավոր Յուսուֆ Քեմալ բեյը, լուսավորության ժողկոմ, պատգամավոր, դոկտոր Ռիզա Նուրի բեյը, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի անդամ Ալի Ֆուադ փաշան:

Ներածական մասում պայամանագիրն անվանված էր բարեկամության և եղբայրության պայմանագիր:

Ռուս-թուրքական պայամանագիրը բաղկացած էր 16 հոդվածից և 3 հավելվածից:

Առաջին հոդվածով կողմերը համաձայնում էին չճանաչել ոչ մի հաշտության պայմանագիր, երե դրանք կողմերից որևէ մեկին ուժով են հարկադրել ընդունել: ՌԽՖՍՀ կառավարությունը համաձայնում էր չճանաչել Թուրքիային վերաբերվող և նրա կառավարության կողմից չճանաչված որևէ միջազգային ակտ: Դա նշանակում էր, որ Խորհրդային Ռուսաստանի

կառավարությունը չէր ճանաչում Սևրի պայմանագիրը: Հոդվածում ասվում էր, որ Թուրքիայի հասկացության տակ սույն պայմանագրում հասկացվում են այն տարածքները, որոնք մտցված են 1920 թ. հունվարի 28-ի թուրքական Ազգային ուխտի մեջ: Դա էլ նշանակում էր, որ Խորհրդային Ռուսաստանը իրավաբանորեն հրաժարվում էր 1917 թ. դեկտեմբերի 31-ին իր իսկ ընդունած «Թուրքահայաստանի մասին» դեկրետից, և Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթները ճանաչու էր Թուրքիայի տարածքներ:

Հոդվածի երրորդ հատվածով որոշվում էր Թուրքիայի հյուսիսարևելյան սամանը, որը անցնում էր Արդահանի և Կարսի սանջակների հյուսիսային վարչական սահմանագծի երկարությամբ՝ Արփաչայ և Արաքս գետերի հնահունով՝ մինչև Ստորին Կարասուի գետաբերանը: Դա նշանակում էր, որ առանց հայ ժողովրդի կամքը հարցնելու Թուրքիային էին զիջում նաև 1920 թ. հայ-թուրքական պատերազմի ժամանակ զավթված տարացքների մեծ մասը:

Երկրորդ հոդվածով Թուրքիան Վրաստանին էր «զիջում» Բաթումի մարզը:

Երրորդ հոդվածով նախատեսվում էր, որ Նախիջրանի մարզը կազմելու է ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը այդ խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության, այսինքն՝ Հայաստանին: 1924 թ. փետրվարի 9-ին կազմավորվեց Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը՝ Ադրբեջանի կազմում:

Մնացած հոդվածները վերաբերում էին սրծովյան նեղուցների շահագործման, կապիտուլացիաների ռեժիմի վերացման, իրենց երկրներում մեկը մյուսի դեմ թշնամական կազմակերպությունների գործունեության արգելմանը, երկաթուղային, հեռագրային և հաղորդակցության այլ միջոցներին, գերիների փոխանակմանը, տրանզիտային առևտրին, հյուպատոսական կոնվենցիա կնքելուն և այլն:

Թուրքիայի պնդմամբ մտցվեց 15-րդ հոդվածը, ըստ որի՝ Ռուսաստանի կառավարությունը պատրաստվում էր դիմել քայլերի, որպեսզի Անդրկովկասի հանրապետությունները Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրում անպատճառ ճանաչեն ռուս-թուրքական պայմանագրի այն հոդվածները, որոնք վերաբերում են իրենց:

Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ռուս-թուրքական պայմանագիրը վավերացրեց մարտի 20-ին, իսկ Թուրքիայի Ազգային ժողովը՝ հուլիսի 22-ին:

Մարտի 31-ին Անդրկովկասի հանրապետությունների կառավարությունները Մոսկվայից ստացան ռուս-թուրքական պայմանագրով նախատեսված սահմանների քարտեզը:

Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքական շրջանակներում այն կարծիքը հայտնվեց, թե այն ուժեղացնում է Ռուսաստանի դիրքը Կովկասում:

Իրականում մարտի 16-ի պայմանագիրը քեմալական Թուրքիայի խոշոր հաղթանակն էր, քանի որ նա կարողացավ հասնել ոչ միայն Սևրի պայմանագիրը չեղյալ հայտարարելուն, որը Թուրքիային վերածելու էր մի թույլ պետության, այլև տեր դառնալ 24 հազ. քառակուսի կիլոմետր զավթած տարածքի, որը պատկանում էր Հայաստանի Հանրապետությանը պայմանագրում խոսք անգամ չեղավ Արևմտյան Հայաստանի գոյության մասին, մոռացության մատնվեց ավելի քան կես դարի ընթացքում նրա ազատագրման համար հայ ազատամարտիկների և ռուս զինվորների թափած արյունը, Հայաստանը զրկվեց Նախիջևանից, Կարսի մարզից՝ Օլթիի, Արդահանի, Սարիղամիշի, Կաղզմանի գավառներից, Սուրմալուի գավառից:

1921 թ. մարտի 16-ի ապայմանագիրը կանխորոշեց այն ներքին լարվածությունը, որ տասնամյակներ շարունակ գոյություն ուներ հայ-ադրբեջանական հարաբերություններում և որը մերին հաշվով հանգեցրեց վերջին

այրունահեղ ընդարումներին: Պայմանագրի կնքումից հետո եռապատկվեց թուրքիային տրվող Խորհրդային Ռուսաստանին տրվող նյութական ու ռազմական օգնությունը. 1921 թվ. ընթացքում Թուրքիային տրվեց ավելի քան 33 հազ. հրացան, 58 մլն. փամփուշտ, 327 գնդացիր, 54 հրանոթ, 130 հազ. արկ, 6.5 մլն. ռուբլի ոսկով: Այդ օգնությունը շարունակվեց նաև հետագա տարիներին:

Մարտի 16-ի պայմանագիրը Հայաստանում ընդունվեց դժգոհությամբ, Խորհրդային Հայաստանի կառավարությունը բողոք ներկայացրեց Ռուսաստանի կառավարությանը առանց իր մասնակցության տարածքային հարցեր լուծելու կապակցությամբ: Այդ առիթով Գ. Չիչերինը պատասխան ուղարկեց Մոսկվայում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ս. Տեր- Գաբրիելյանին՝ գրելով, որ պայմանագրային սահմանը ոչ թե ոչնչով չարդարացվող նվեր է Թուրքերին այլ՝ ամենադաժան ու երկարատև պայքարի արդյունք: Միաժամանակ Չիչերինը մեղադրում էր հայկական պատվիրակությանը, որը, չնայած իր առաջարկին խուսափել էր իր հետ կապի մեջ լինելուց, որը, անշուշտ դատապարտելի է: Հայաստանի կառավարությունը պարտավոր էր հենց բանակցությունների սկզբում հանդես գալ հայտարարությամբ, որ առանց իր մասնակցության կնքվող ռուս-թուրքական պայմանագիրը, որը շոշափելու է Հայաստանի շահերը ինքը չի ընդունի:[2]

1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը այնումենայնիվ, ունեցավ այն դրական հետևանքը, որ չեղյա հայտարարվեց Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-թուրքական պայմանագիրը, որից թուրքերը շարունակում էին կառչած մնալ: Չպետք է անտեսել այն իրողությունը, որ առանց Խորհրդային Ռուսաստանի վճռական դիրքորոշման Խորհրդային Հայաստանը միայնակ չէր կարող դիմադրել Թուրքիայի զավթողական հավակնություններին:

[2] Գ . Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ. Երևան, 1999, էջ 458

1921 թ. ապրիլի 4-ին Չիչերինը հրահանգել էր Օրջոնիկիձեին՝ ամենակտրուկ հակահարված տալ Ալեքսանդրապոլի հրեշավոր պայմանագրի ամեն մի վկայակոչմանը և ուղղակի հայտարարել թուրքերին, որ Ռուսաստանը ոչ մի բանի առջև կանգ չի առնի, եթե կրկնվեն Ալեքսանդրապոլի պայմանագիրը Հայաստանին ստիպողաբար ճանաչել տալու փորձերը: Իսկ ապրիլի 6-ին Չիչերինը գրել է Օրջոնիկիձեին. «Ալի Ֆուդը ինձ խոստացել է անհապաղ ազատել Ալեքսանդրապոլը: Նրան իսկույնևեթ հաղորդում եմ Կարաբեքիրի խուլիգանության մասին՝ մատնանշելով, որ Թուրքիայի և Խորհրդային Հայաստանի միջև պատերազմը կնշանակի պատերազմ Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև»: Իսկ ապրիլի 8-ին Թուրքիայի կառավարությունը Խորհրդային Ռուսաստանի կառավարության ներկայացրած նիստում ուղղակի ընդգծում էր, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի կատարման ցանկությունը հավասարազոր է Մոսկվայի պայմանագրի վերացմանը: Թուրքիան վճռականորեն չէր ցանկանում ազատել Ալեքսանդրապոլը և ռուս-թուրքական պայմանագրով Հայաստանի թողնված մյուս տարածքները:

Չիչերինի կտրուկ պահանջներին թուրքերը տալիս էին խուսափողական պատասխան հայտարարելով, թե իրենց զորքերը Ալեքսանդրապոլից դուրս կբերվեն, եթե հանգամանքները թույլ տան: ՈՒստի Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը հրահանգ տվեց 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությանը՝ զորքը շարժել դեպի Ալեքսանդրապոլ, և միայն 1921թ. մայիսի կեսին Թուրքական զորքը դուրս բերվեցին Ալեքսանդրապոլի գավառից:

Խորհրդային պատմագրության մեջ մինչև 1970-ական թվականները պարզապես աշխատել են «սահել» Մոսկվայի պայմանագրի վրայով: 1921 թ. մարտի 16-ին ՌԽՖՍՀ-ի և Թուրքիայի միջև կնքվեց բարեկամության պայմանագիր, ըստ որի, թուրքերը պետք է անհապաղ ազատեին

Ալեքսանդրապոլը:[3] Տպավերություն է ստացվում, որ Մոսկվայի պայմանագիրն ստորագրվել էր հենց միայն Ալեքսանդրապոլն ազատագրելու համար:

1921 թ. փետրվարի վերջին Մոսկվայում վերսկսվեցին խորհրդա-թուրքական բանակցությունները, որի ընթացքում պետք է քննվեր նաև Անդրկովկասին ու Հայաստանին վերաբերող հարցեր: Կոնֆերանսին մասնակցելու համար Մոսկավ էր ժամանել նաև Խորհրդային Հայաստանի պատվիրակությունը: Բայց հենց այդ օրերին Ս. Վրացյանը հայտնում է կոնֆերանսի մասնակիցներին, որ Հայաստանում իշխանության գլուխ է անցել Հայաստանի փրկության կոմիտեն և հետևաբար կոնֆերանսն իրավասու չէ քննության առնելու Հայաստանի հարցը, որը և հենց թուրքերի ցանկությունն էր: Օգտագործելով Ս. Վրացյանի դիմումը՝ թուրքերը պահանջում էին ընդունել Ալեքսանդրապոլի պայմանագիրը և հրաժարվում էին բանակցություններ վարել Հայաստանի պատվիրակության հետ: Ս. Վրացյանը այդ օրերին նման բովանդակությամբ հեռագիր է ուղարկում նաև Լոնդոնի կոնֆերանսին: Մոսկավայի կոնֆերանսը մարտի 16-ին ավարտվեց իր աշխատանքները Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի կառավարությունների միջև պայմանագրի կնքմամբ, որով Ալոքսանդրապոլի պայմանագիրը կորցրեց իր ուժը:[4]

Փետրվարյան հեղափոխությունը բացասական դեր խաղաց. Խորհրդային կողմը եռանդուն կերպով առաջ էր քաշում հայ ժողովրդի օրինական տարածքային պահանջները , սակայն հանդիպում է թուրքերի մերժողական վերաբերմունքին: Կային անբարենպաստ պայմաններ Մոսկվայի պայմանագրում, այն է՝ Լոնդոնում զուգահեռաբար ընթացող կոնֆերանսը, պարենային, վառելիքային սուր ճգնաժամը, Կրոնշտադտում բռնկված

[3] Ա. Եսայան , Հայաստանի միջազգային-իրավականդրությունը 1920-1922, Երևան , 1967, էջ 239

[4] Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ԳԱ հատ., հատոր 7, Երևան, 1967, էջ 140

հակախորհրդային խռովությունը, ուստի խորհրդային կառավարությունը ստիպված եղավ տարածքային հարցերում բավարարվել միայն Ալեքսանդրապոլի գավառի ազատագրումով, իսկ Նախիջևանի մարզը հայտարարվեց Ինքնավար տարածք՝ Ադրբեջանի հովանավորությամբ: Որոշակի հետաքրքրությքուն է ներկայացնում Կարսը, Արդահանը և Արդվինը քեմալական Թուրքիային զիջելու վերաբերյալ Օրջոնիկիձեյի հետևյալ բացատրությունը, որ նա տվել է 1921 թ. ապրիլի 11-ին, Բաքվի խորհրդի նիստում. «…Այստեղ մենք ստիպված էինք հաշվի նստել կատարված փաստի հետ: Դաշնականերն արդեն համապատասխան պայմանագիր էին կնքել, թուրքերը գրավել էին իրենց հանձնված մարզերը և Մոսկվայում մեզ հետ բանակցություններ վարելու ժամանակ կտրականապես հրաժարվում էին վերադարձնել դրանք մեզ: Այդ բանի համար մենք թուրքերի հետ բախվել չէինք ցանկանում: Դա ձեռնտու կլիներ միայն Անգլիային ու Ֆրանսիային»:[5]

Մոսկվայում Ռուսաստանի և Թուրքիայի միջև 1921 թ. մարտի 16-ին կնքված պայմանագրով Թուրքիային մնացին նրա օկուպացրած տարածքները (Կարսի , Արդահանի, ու Արդվինի օկրուգները՝ 19915 քառ. կմ տարածությամբ և 492 հազար բնակչությամբ), որոնք մինչև 1918 թվականը մտնում էին Ռուսաստանի կազմի մեջ:

Մոսկավայի պայմանագիրը կնքվեց միջազգային բարդ իրադարձության մեջ, խորհրդային կողմի համար անբարենպաստ պայմաններում: Դրա հետևանքով չլուծվեցին հայ ժողովրդի արդարացի տարածքային պահանջները, և թուրքական լծի տակ մնաց ոչ միայն Արևմտյան Հայաստան, այլև Արևելյան Հայաստանի մի մասը: Դա բացատրվում է նախ և առաջ միջազգային անբարենպաստ իրադրությամբ, երկրորդ՝ Արևելյան և մասնավորապես

[5] Շ. Ռ. Հարությունյան, Հայ ժողովրդի պատմություն , հ. Չորրորդ, Երևան 1970, էջ 141-142

Թուրքիայում խորհրդային քաղաքականության հեռանկարով, երրորդ՝ Կովկասում անհապաղ խաղաղություն հաստատելու անհրաժեշտությամբ:[6]

Մոսկվայի կոնֆերանսում տարածքային սահմանազծումների հարցը ամենակարևոր և միաժամանակ ամենամեծ դժվարություն ներկայացնող հարցն էր: Ընդգծվում էր թուրքական կողմի մաքսիմալ պահանջները՝ Կարսի մարզը, Բաթումի մարզը՝ Ախալքալաքի և Ախալցխայի շրջանների հետ, Սուրմալույի գավառը, Նախիջևանի մարզը: Չնայած մահմեդական ազգաբնակչության որոշ գերակշռության, դիվանագիտական շրջաններում Նախիջևանը միշտ էլ համարվել է Հայաստանի անբաժանելի մաս: Սակայն Թուրքիան, հետևողականորեն իրականացնելով իր հայատյաց քաղաքականությունը, հասավ այն բանին, որ Նախիջևանը ևս անջատվեց Խորհրդային Հայաստանից՝ դրանով իսկ ամբողջացնելով նրա անդամահատումը:[7]

---

[6] Մ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, էջ 386-389

[7] Է. Զոհրաբյան, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները1920-1922 թթ., Երևան, 1979, էջ 230

Կարսի կոնֆերանսը 1921 թ. Մեպտեմբերի 26 – հոկտեմբերի 13

Մոսկվայի 1921 թ. Մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի կնքումով փաստորեն Ալեքսանդրապոլի պայմանագիրը վերացավ՝ չնայած այդ մասին պայամանագրում հատուկ կետ չկար: Պայմանագրի կնքումից հետո Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն առաջարկեց դրա հիման վրա համապատասխան պայմանագիր կնքել Անդրկովկասյան հանրապետությունների հետ: Մոսկվայում գտնվող Անդրկովկասյան հանրապետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ մշակվեց պայմանագրի նախագիծ և Չիչերինի բացատրական գրության հետ միասին ուղարկվեց Թիֆլիս:

Թուրք-Անդրկովկասյան կոնֆերանսին նախապատրաստվեկու նպատակով 1921թ. մայիսի 7-ին Բաքվում հրավիրվեց Անդրկովկասյան երեք հանրապետությունների ներկայացուցիչների խորհրդակցություն: Խորհրդակցությանը Հայաստանից մասնակցում էր Ալ. Բեկազդյանը, Վրաստանից՝ Մ. Օրախելաշվիլին, Ադրբեջանից՝ Մ. Հուսեյնովը, ինչպես նաև ՌԿ(բ)Կ ԿԿ անդամ Գ. Օրջոնիկիձեն և Անդրկովկասում ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը:

Խորհրդակցությունում որոշվեց, որ Թուրքիայի հետ առաջիկա կոնֆերանսում Հայկական, Վրացական և Ադրբեջանական ԽՍՀ-ները հանդես կգան միասնաբար՝ որպես մեկ պայմանավորվող կողմ:[8]

[8] Է. Զոհրաբյան, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները1920-1922 թթ., Երևան, 1979, էջ 253

Խորհրդակցությունը գտավ, որ բանակցությունների հիմքում պետք է դրվի Մոսկվայի պայմանագիրը: Որոշվեց նաև, որ կոնֆերանսը կարող է գումարվել Բաքվում, Թիֆլիսում կամ Կարսում, որտեղ առաջին հերթին պիտի քննարկվեն Հայաստանի, հետո Վրաստանի և ապա Ադրբեջանի հետ կապված հարցերը:

1921թ. Օգոստոսի 26-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը քննարկեց կոնֆերանսին նախապատրաստվելու հարցը և կառավարության հետ միասին կազմեց հուշագիր, որի մեջ շարադրված էին կոնֆերանսի քնարկմանը ներկայացվող քաղաքական, տնտեսական, առևտրական վերաբնակեցման, վնասների փոխհատուցման վերաբերյալ հարցերը:

Հուշագրում առաջարկվում էր Սուրմալուի գամառի Կողբի շրջանը թողնել Խորհրդային Հայաստանին, որովհետև Նախիջևանի ներկրամասը Ադրբեջանին տալուց հետո Կողբի աղահանքրը միակն էին որտեղից, Հայաստը կարող էր աղ ստանալ և ապրանքափոխանակություն կատարել արտասահմանի հետ:

Հուշագիրն առաջարկում էր Նախիջևանի երկրամասի նկատմամբ հովհանավորության իրավունքը հանձնել Խորհրդային Հայաստանին: Առաջարկվում էր Թուրքիային որշակի տոկոս տալու պայմանով Հայաստանին իրավունք վերապահել տնտեսական շահագործման ենթարկելու Օլթիի քարածխի, Կաղզվանի մկնդեղի, Կողբիի աղայանքրը, Սարիղամիշի անտառները՝ եթե դրանք մնային Թուրքիայի սահմաններում:

Թուրքիայի հետ առևտրական համաձայնության հիմքում պետք է դրվեին ապրանքների անմաքս փոխադրման, ազատ ներմուծման, արտասահման և տրանզիտի, ինչպես նաև մի շարք արտադրությունների կոնցեսիաների իրավունք:

Թուրքիայի հետ առանձին համաձայնություն պետք է կատարվեր երկուստեք վերաբնակեցվողների մասին, որոնց համար պետք է ապահովեին անհրաժեշտ պայմաններ:

Կարսի կոնֆերանսին նախապատրաստվելու հարցը քննարկվեց նաև ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921թ. սեպտեմբերի 3-ի նիստում, որոշվեց խստորեն պահպանել Մոսկվայի պայմանագրի շրջանակները, ցուցադրել Անկարայի հետ Կովկասյան հանրապետությունների համերաշխությունը՝ Անտանտի դեմ մղվող պայքարում, հարց բարձրացնել արոտավայրերից և Կաղզվանի շրջանի աղահանքերից օգտվելու, Ճորոխի շրջանի պղնձի կոնցեսիաների մասին: Առանձին կերպով շտվում էր՝ ոչ մի դեպքում թույլ չտալ Կովկասյան հանրապետությունների առանձին ելույթներ, բոլոր հարցերում լինել միասնական:

Կարսի կոնֆերանսը սկսվեց 1921 թ. սեպտեմբերի 26-ին: Խորհրդային Հայաստանի պատվիրակության նախագահն էր արտգործժողկոմ Ասքանազ Մռավյանը, անդամներից էր ներքգործժողկոմ Պողոս Մակինցյանը: Կային նաև խորհրդականներ:

Բացելով կոնֆերանսը՝ թուրքական պատվիրակության նախագահ Քյազիմ Կարաբեքիրը առաջարկեց երեք հանրապետությունների հետ պայմանագիր կնքել առանձին-առանձին, որը մերժվեց: Մոսկավայի պայմանագրով գծված սահմանները բավականին ընդհանուր բնույթ էին կրում, ուստի Կարսի կոնֆերանսը պետք է լրացվեր այդ բացը: Այդ նպատակով ստեղծվեց սահմանագծային հանձնաժողով, որի մեջ Խորհրդային Հայաստանը ներկայացնում էր Վլադիմիր Թամրուչին:

Սահմանագծի մի շարք տեղամասերի շուրջ համաձայնություն չկայացվեց և որոշվեց հարցի լուծումը թողնել կոնֆերանսին: Անիի և Կեղբի պատկանելիությունը վիճելի չէր. դրանք գտնվում էին Թուրքիային անցած տարածքներում: Սակայն անդրկովկասյան պատվիրակությունները, ընդառաջելով Հայաստանին, որոշեցին հարց հարուցել նշված վայրերը Հայաստանին վերադարձնելու մասին:

Կարաբեքիր փաշան հայտարարեց, որ Թուրքական պատվիրակությունը սկզբունքորեն դեմ չէ Անին վերադարձնելուն, բայց պետք է այդ մասին հարցում անի կառավարությանը:

Իր ելույթում Խորրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Յակով Գանեցկին ընդգծեց, որ Անիի ավերակների վերադարձի հացը էական է ոչ միայն Հայաստաի, այլև ամբողջ Անդրկովկասի համար:

Սակայն հետագայում պարզվեց, որ Թուրքրը խիստ անհաշտվողական են և հրաժարվեցին զիջել ոչ միայն Անիի ավերակները, այլև Կողբի աղահանքրի կոնցենցիաները: Կարսի կոնֆերանսում քեմալական պատվիրակության անհաշտ ու անզիջում դիրքի պատճառով սամանների ուղղման վերաբերյալ Խորհրդային Հայաստանի պատվիրակության և ոչ մի առաջարկ չընդունվեց: Չհաջողվեց լուծել նաև Ալեքսանդրապոլի դեպոյի թուրքերի կողմից թալանված գույքը վերադարձնելու հարցը:

Կարսի պայմանագիրը ստորագրվեց 1921 թ. հոկտեմբերի 13-ին: Այն բաղկացած էր 20 հոդվածից և 2 հավելվածներից: ՀԽՍՀ-ի կողմի պայմանագիրը ստորագրեցին Ա. Մռավյանը և Պ. Մակինցյանը, Վրաստանի կողմից՝ Շ. Էլիավան և Ա. Սվանիձեն, Ադրբեջանի կողմից՝ Բ. Շահթախթինսկին, Թուրքիայի կողմից՝ Քյազիմ Կարաբեքիրը և պատվիրակության երեք այլ անդամներ, ՌԽՖՍՀ կողմից՝ Լատվիայում լիազոր ներկայացուցիչ Յակով Գանեցկին:

Կարսի բանակցություններում Խորհդային Ռուսաստանի պատվիրակությունը պիտի ղեկավարեր Անդրկովկասում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ ներկայացված Բորիս Լեգրանը: Սակայն Մուստաֆա Քեմալի պահանջով, ինչպես Մոսկվայի ռուս-թուրքական, այնպես էլ Կարսի բանակցություններին Լեգրանին թույլ չտվեցին մասնակցել, որովհետև նրան համարում էին հայամետ գործիչ:

Տեղեկանալով, որ Կարսի բանակցություններում ՌԽՖՍՀ պատվիրակության ղեկավար է նշանակվել ոչ թե ինքը, այլ Յակով Գանեցկին, Լեգրանը խիստ վիրավորվեց, նամակով դիմեց Գ. Չիչերինին և ՌԿ(բ)Կ Կենտկոմին՝ պահանջելով իրեն ազատել Անդրկովկասում Ռուսաստանի լիազոր ներկայացուցչի պաշտոնից և ընդհանրապես արդգործժողկոմատի համակարգից: Իհարկե, նրա դիմումը մերժվեց, բայց դրությունը մնաց անփոփոխ:

Չնայած Կարսի պայմանանագրի նախագիծը հարազատ էր ռուս-թուրքական պայմանագրի ոգուն, սակայն այն չբացառեց վիճաբանությունները: Ճիշտ է, Կարսի պայմանագրի շատ հոդվածներ բառացիորեն կրկնում էին Մոսկվայի պայմանագրի համապատասխան հոդվածները, և այդ առումով Կարսի պայմանագիրը չէր դիտվում որպես ինքնուրույն միջազգային իրավական ակտ:

Կարսի պայմանագրի առաջին հոդվածով փաստորեն պաշտոնապես չեղյալ էր համարվում Ալեքսանդրապոլի պայմանագիրը և այն ուղղված էր Սևրի պայմանագրի դեմ:

Պայմանագրի երկրորդ հոդվածով Անդրկովկասի հանրապետությունները ճանաչեցին, որ Թուրքիա հասկացության տակ հասկացվում են այն տարածքները, որոնք մտցված են 1920 թ. հունվարի 28-ի թուրքական ազգային ուխտի մեջ: Այդ նշանակում էր հրաժարում Թուրքիայի նկատմամբ տարածքային որևէ պահանջից, ուստի պայմանագրի երկրորդ հոդվածը առաջին հերթին ուղղված էր Հայ դատի դեմ:

Անընդունելի է Մուստաֆա Քեմալի՝ 1922 թ. մարտի 1-ին թուրքական մեջլիսում արած հայտարարությանը, թե Կարսի պայմանագիրը նշանավորում է Արևելքում իրենց փաստական վիճակի իրավական ճանաչումը և կրկին վկայում Սևրի պայմանագրի գործադրման անհնարինությունը և այն, թե «այսպես կոչված Հայկական հարցը Կարսի պայմանագրում գտավ իր ամենաճիշտ լուծումը»:

Հայկական հարցը «այսպես կոչված» չէ, այլ իրական հարց՝ բարձրացված միջազգային իրավունքի աստիճանի, երկրորդ՝ այն երբեք չլուծվեց և դեռ մնում է բաց:[9]

[9] Մ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, էջ 386-389

Եզրակացություններ և առաջարկություններ

Հետազոտելով «ՀԽՍՀ տարածքային հիմախնդիրները» թեմայի ուսուցանումը միջին դպրոցում հանգեցի այն եզրահանգմանը, որ թեման արդիական է, քանի որ հիմնախնդիրներն այսօր էլ լուծման կարիք ունեն։

Թեմայի ուսուցանումը և ուսումնասիրումն արդյունավետ կատրելու համար ուսուցիչը զրույց մեթոդի օգնությամբ կներկայացնի կարևոր և օգտակար գիտելիքներ թեմայի վերաբերյալ։ Հետազոտություն կատարելու համար (դասարանի առանձնահատկությունները հաշվի առնելով) սովորողներին խմբերի բաժանելով կտրվի համապատասխան առաջադրանքներ՝

- Խումբ առաջին՝ Տարածաշրջանում առաջացած տարածքային հինախնդիրների նախապատմություն։
- Խումբ երկրորդ՝ Մոսկվայի կոնֆերանսի հրավիրումը և ռուս-թուրքական շահերը։
- Խումբ երրորդ՝ Զանգեզուրի և Արցախի հիմնախնդրի ուսումնասիրում։
- Խումբ չորրորդ՝ Կարսի պայմանագրի կնքում և հայկական հողերի ապօրինի բռնազավթում։

Խմբերը հանձնարարված առաջադրանքները կատարելուց հետո մեկը մյուսին լրացնելով ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքը, ցուցադրական մեթոդի օգնությամբ համեմատեցին վիճելի տարածքներին վերաբերող քարեզները, Վենի դիագրամի օգնությամբ նշեցին Մոսկվայի և Կարսի պայմանագրերի նմանությունները և տարբերությունները, ինչպես նաև կատարեցին համեմատություն կնքված պայմանագրերի միջև։ Վեր հանեցին տարիների ընթացքում մեր թույլ տված սխալները, որոնց արդյունքում նշված տարածքային հիմնախնդիրները առ այսօր համարվում են չլուծված և դառնում են տարածաշրջանում ցանկացած պահի պատերազմ վերսկսելու պատճառ։ Թեման

հետազոտելուց, ներկայացնելուց, համեմատելուց, վերլուծելուց և քննադատելուց հետո սովորողները արտահայտեցին իրենց դիրորոշումը հինախնդրի վերաբերյալ և առաջարկեցին լուծումներ տարածքային հիմնախնդիրների լուծման համար։

Թեման խմբային աշխատանքի միջոցով հետազոտելուց հետո սովորողների մոտ զարգացավ կազմակերպված թիմային աշխատանք կատարելը։ Բացի դասագրքից սովորողները հավելյալ աղբյուրներից օգտվելու հմտություններ ձեռք բերեցին։ Հետազոտությունը զարգացրեց սովորողների մոտ փաստերը վերլուծելու և համեմատելու կարողությունը, քննադատական մտածողությունը, սովորողներին տվեց հնարավորություն վեր հանելու անցյալում թույլ տված սխալները և սովորողները իրենք առաջարկեցին խնդիրների լուծման եղանակները։

Իսկ առաջարկությունների մասով կարող եմ նշել, որ իմ նախապես մշակված քայլերը հիմնականում տվեցին իրենց արդյունքները, որովհետև աշակերտները համակողմանի տիրապետեցին թեմային։ Առաջարկում եմ դասարանի առանձնահատկությունները հաշվի առնելով թեման ուսուցանել ներկայացված ձևով։ Անհրաժեշտության դեպքում կիրառել այլ նպատակահարմար մեթոդներ։

Օգտագործված գրականության ցանկ

1. Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973
2. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ. Երևան, 1999:
3. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ. Երևան, 1999:
4. Եսայան Ա., Հայաստանի միջազգային-իրավականդրությունը 1920-1922, Երևան , 1967
5. Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920- 1922 թթ., Երևան, 1979:
6. Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղալյան Գ., Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին, Երևան, 2015:
7. Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010:
8. Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ԳԱ հատ., հատոր 7, Երևան, 1967:
9. Հայոց պատմություն (խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան), հ. 4, գիրք I, Երևան, 2010:
10. Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմություն , հ. չորրորդ, Երևան, 1970:
11. Ստեփանեան Խաչատուր, Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման հիմնահարցը սփուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ, Անթիլիաս, 2021: